Արտաշես Բոյաջյան

ԲՈՒՍԱԲՈՒՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ ԳԱՎԱՌՈՒՄ XIX դ. ՎԵՐՋԻՆ XXդ. ՍԿԶԲԻՆ

Ալեքսանդրապոլի գավառում XIX դ. վերջին եւ XX դ. սկզբին հանրային տնտեսության զարգացման գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն էր, ինչը աստիճանաբար ենթարկվել եւ հարմարվել էր շուկայի պահանջներին: Գավառի բուսաբուծության զարգացման վրա էական ազդեցություն են ունեցել ոչ միայն բնական, այլեւ հասարակական գործոնները, որոնցից կարելի է առանձնացնել արտադրողական ուժերը, հարկերը, տուրքերը եւ վարկերը, աշխատանքի բաժանման ձեւերը, օգտագործվող գյուղատնտեսական գործիքների տեսակները եւ այլն:

Առաջին՝ 1897թ. համառուսական մարդահամարի տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլի գավառում գյուղատնտեսությամբ էր զբաղվում բնակչության 86,47%-ը, Կարսի մարզում՝ 82,30%-ը, այդ թվում՝ քաղաքային բնակչության 23,4 եւ 23,6%-ը (համեմատության համար հիշատակենք, որ Ռուսական կայսրությունում այդ ցուցանիշը 9,3% էր, իսկ Կովկասում՝ 18,5%)[1]:

XIXդ. վերջին, երբ կապիտալիզմը ներթափանցեց Ալեքսանդրապոլի գավառ, երկաթուղու կառուցումը, ապրանքաշրջանառության ակտիվացումը հանգեցրին գյուղատնտեսության կառուցվածքի, արտադրության եւ բնակչության զբաղվածության քանակական ու որակական փոփոխության: Ներկայացվող ժամանակահատվածում Ալեքսանդրապոլի գավառում հացահատիկային բույսերի մշակությամբ զբաղվողների թիվը նվազել է, ինչը պայմանավորված էր արտադրության նոր միջոցների կիրառումով եւ գյուղացիների հողազրկման ակտիվ գործընթացով: Ապրանքադրամական հարաբերությունների արմատավորումը, գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումը հանգեցրին նահապետական գերդաստանի քայքայմանը եւ բնակչության սոցիալական կազմի փոփոխությանը, ինչն էլ իր ազդեցությունն ունեցավ նաեւ բուսաբուծության զարգացման ընթացքի վրա: Գավառի սակավահողությունը եւ ընտանիքների թվի ավելացումը ավելի էին դժվարացնում մշակովի հողերի արդյունավետ օգտագործումը: Բացի դրանից, հողը մշակելու դժվարությունները եւ ցածր արտադրողականությունն ստիպել են գավառի երկրագործներին փոխադարձաբար օգնել իրար, այսինքն՝ բուսաբուծությունը հանրային բնույթ է կրել: Գյուղերում հողերի սակավության պատճառով 3-4 տարին մեկ անգամ իշխանության թույլտվությամբ եւ հասարակական վճռով նոր հողաբաժանություն է կատարվել, որը կոչվել է *«ջանի»* կամ *«փափախի»*: Արդյունքում գյուղացիական մի շարք տնտեսությունների հողն ավելանում էր, իսկ մյուսներինը՝ պակասում[2]:

Գավառի բուսաբուծությունը XIXդ. վերջին ենթարկվում է ճյուղային որակական ու քանակական փոփոխության: Վիճակը փոխվեց 1890-ական թվականներին, երբ Ալեքսանդրապոլի գավառում առաջին անգամ սկսեցին օգտագործել

---

[1] *Կիրակոսյան Գ., Գյուղատնտեսական ինքնագործները եւ վարձու աշխատողներն Արեւելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքում (XIX դարի վերջին), Եր., 2009, էջ 30:*

[2] *Մխիթարյանց Ա., Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինյան ազգագրական ժողովածու, Մոսկվա-Ալեքսանդրապոլ 1901, էջ 300:*

Ռուսաստանից բերված երկաթե գութաններ: Գութանավարությունը նպաստեց գյուղատնտեսական կոոպերացման աշխատանքներին: Ի տարբերություն արոբային երկրագործությանը՝ գութանային ավելի աշխատատար էր: Հարկ է նշել, որ գավառում միայն հարուստ տնտեսություններն էին օգտագործում գութան: Վերջինիս գործածության համար պահանջվել է 10-12 զույգ եզ, 8-10 աշխատող[3]: Գութանով վարել են խոպան կամ մի քանի տարիներ հանգստացած հողատարածքները, այն էլ գերազանցապես աշնան շրջանում: Դրանց կիրառումն Ալեքսանդրապոլի գավառում նախադրյալներ ստեղծեց գյուղատնտեսական գործիքների վաճառքի կետերի, դարբնոցների ու արհեստանոցների ավելացման համար:

Գյուղացու ամբողջ կարողությունը հիմնականում հողն էր, իսկ եկամտի չափն էապես կախված էր հողի քանակական եւ որակական հատկանիշներից: Ալեքսանդրապոլի գյուղատնտեսական հողերի հիմնական մասը պետական սեփականություն է եղել, եւ գյուղացին այն մշակելու համար վարձակալել է: Այսպես՝ 1913թ. Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակավայրերի թիվը 164 էր, որից 163-ը պետական էր, եւ միայն մեկը՝ վանքապատկան: Ալեքսանդրապոլի գավառը 1913թ-ին ունեցել է 291639 հա գյուղատնտեսական հողատարածք, որից 282686-ը՝ պետական, այդ թվում՝ 7881 հա քաղաքապատկան, իսկ 1072-ը՝ վանքապատկան, արոտավայրերը կազմել են 85561հա[4]: Նշված տարում գավառի ոռոգովի հողատարածքը կազմել է 1596 դեսյատին (*1դեսյատինը՝ 1,1հա է)*, ինչը Երեւանի նահանգում ամենաքիչն է եղել[5]: Երեւանի նահանգի գյուղատնտեսական արտադրության կարիքներն ուսումնասիրող կոմիտեի զեկուցագրում նշված է, որ Ալեքսանդրապոլի գավառում հողաբաժինները վերջնականապես ամրացված չեն շինականներին, տիրապետության այդպիսի անորոշությունը խանգարում է գյուղացիներին իրականացնելու ջրաշինարարական եւ ընդհանրապես հողի բարելավման եւ հողատարածքներն ընդլայնելու աշխատանքներ[6]:

Բուսաբուծական աշխատանքների արդյունավետ կազմակերպման վրա բացասաբար են անդրադարձել գոյություն ունեցող պետական հարկերը, վարկերը եւ եկեղեցու տուրքերը: Ալեքսանդրապոլի գավառում գյուղացիներին բաժանել են երկու խմբի, այսպես կոչված, «*մատաղ ուտողների*» եւ «*եզների*»: Մատաղ ուտողները օրենքի առաջ ճանաչված հարկատու եւ համայնական բոլոր ծախսերին մասնակցություն ունեցողներն էին, իսկ եզները հարկատու էին ըստ կարողության եւ աղքատության պատճառով գյուղական համայնքի ծախսերին չէին մասնակցում[7]: Ըստ այդմ էլ Ալեքսանդրապոլի գավառում գոյություն է ունեցել պարտադիր եւ կամավոր հարկերի ու տուրքերի համակարգ, ինչը հնարավորություն է տվել գյուղացուն ըստ իր ունեցվածքի վճարելու կամավոր տուրքերը: Գավառում կամավոր տրվող տուրքերից էին՝ «*զանձանակաղրամը*», «*աղքատաց զանձանակը*», «*աջհամբույրը*» եւ այլն: Իսկ եկեղեցուն պարտադիր վճարվող տուրքերն էին՝ «*Աթոռանաս պսակը*», «*Պտղի արդյունքը*», «*Թաղման վարձը*», «*Պսակադրման վարձը*» «*Մկրտության վարձը*», «*Եկեղեցու լուսագինը*», «*Տեղիները*» եւ այլն: Պետությանը տրվող հարկերն ու տուրքի տեսակներն ավելի քիչ էին. «*Արքունական ծխահարկը*» կամ հողի հարկը, տնահարկը կամ եկամտահարկը, որն ալեքսանդ-

---

[3] *Մխիթարյանց Ա., նշվ.աշխ., էջ 295:*

[4] *Վիրաբյան Ս., Շիրակի գեղանիստ, Եր., 2013, էջ 59:*

[5] *Ադոնց Ս., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը եւ հայ տնտեսագիտական միտքը XXդ. սկզբին, Եր., 1968, էջ 146:*

[6] *Памятная книжка Эриванской губернии на 1904, отд.IV, стр. 40.*

[7] *Մխիթարյանց Ա., նշվ.աշխ., էջ 300:*

բապոլցիներին հայտնի է *«դպիտա»* անվանումով[8]: Ներկայացված հարկերի եւ տուրքերի բազմազանությունն ու տրվող գումարների, գյուղմթերքների չափը ոչ միայն խոչընդոտել են բուսաբուծության զարգացմանը, այլեւ նպաստել գյուղացիության արտագաղթին:

Ալեքսանդրապոլի գավառում գյուղատնտեսության մեջ տիրապետող է եղել հացահատիկային բույսերի մշակությունը, որը մինչ այսօր էլ զարգացման ոչիսկային ճյուղ է: Գլխավոր պատճառը անբարենպաստ կլիմայական պայմաններն են՝ երաշտը, կարկտահարությունը եւ մասնավորապես ցածրադիր գոտիներում մորեխի հարձակումները ցորենի դաշտերի վրա: Արժե հիշատակել, որ անբարենպաստ տարիներին գյուղացիները, մինչեւ իսկ կիսասոված մնալով, սերմացու ցորենին ձեռք չեն տվել: Ա. Ջավարյանի տվյալներով, 1893թ. համախառն բերքից սերմացուն առանձնացնելուց հետո Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Ղարաքիլիսա (ներկայիս՝ Վանաձոր) գյուղի մեկ բնակչին մնացել է 1,3 փութ կամ 20,8կգ հացահատիկ[9], որը չի բավականացրել նույնիսկ քառորդ հեկտար ցանելու համար: Հացի պակասության պատճառով հացամթերքի գների շեշտակի աճ է գրանցվել: Երեւանում 1883թ. ցորենի փութը վաճառվել է 68, Ալեքսանդրապոլում՝ 94 կոպեկով, իսկ տասը տարի անց՝ 1ռ.24կ[10]: 1900-1913թթ. ընթացքում հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքը Ալեքսանդրապոլի գավառում գրեթե չի ավելացել: Բացի դրանից, հացահատիկի բերքատվության չափը կախված է եղել նաեւ օգտագործվող աշխատանքային գործիքների տեսակներից: Ալեքսանդրապոլի գավառում հացահատիկի հունձը կատարվել է մանգաղով եւ գերանդիով, միայն ռուս աղանդավորներն են երբեմն օգտագործել ձիու խոտհարքներ, որի ժամանակ բերքի կորուստը քիչ է եղել, իսկ աշխատանքի արտադրողականությունը՝ բարձր: Չնայած անբարենպաստ կլիմայական պայմաններին եւ ցածր արտադրողականությանը՝ XIXդ. վերջին եւ XXդ. սկզբին Ալեքսանդրապոլի գավառը Երեւանի նահանգում առանձնակի տեղ է զբաղեցրել ապրանքային հացահատիկի արտադրությամբ: Այսպես, Աղին եւ Անի երկաթուղային կայարաններից 1910թ. արտահանվել է 216 հազ. փութ ցորեն ու գարի, իսկ 1912թ.՝ 530 հազ. փութ: Ալեքսանդրապոլի գավառից յուրաքանչյուր տարի միայն Թիֆլիս՝ գարեջրի գործարաններ է առաքվել մոտ 100 հազ. փութ գարի[11]: Սակայն արտահանմանը զուգահեռ՝ գավառը Ռուսաստանից ներմուծել է ցորեն՝ ալյուրի արտադրության համար: Մինչեւ Առաջին աշխարհամարտը գավառից ցորենի արտահանումն իր ծավալներով գերազանցել է ներմուծմանը:

XXդ. սկզբին գավառի երկրագործությունում եռադաշտային համակարգն ամենուրեք արմատավորված չէր: Որպես կանոն հողը չէր պարարտացվում, իսկ ոռոգելի հողատարածություններն ավելացել էին աննշան: Գավառի երկրագործները հացաբույսերից մշակել են ցորեն, գարի, վարսակ, ընդեղենից՝ սիսեռ, ոսպ, բակլա, լոբի, յուղատու բույսերից՝ կտավատ, գերչակ, կանեփ: Ցանել են երեք տեսակ ցորեն՝ *«քոիկ»*, *«կարմրհատ»* եւ *«թոփաչ»*: Քոիկը հիմնականում ցանել են աշնանը: Արժե հիշատակել, որ քոիկից ստացել են ձավար, իսկ կարմրհատից՝ բլղուր: Թոփաչի բերքատվությունը գերազանցել է քոիկի եւ կարմրհատ ցորենի բերքատվությունը: Շիրակի ցածրադիր եւ բարձրադիր գոտիներում լայն տարա-

---

[8] *Մխիթարյանց Ա., նշվ.աշխ., էջ 302:*

[9] *Ադոնց Մ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը եւ հայ տնտեսագիտական միտքը XXդ. սկզբին, Եր., 1968, էջ 137:*

[10] *Նույնը:*

[11] *Նույն տեղում, էջ 141:*

ծում է ունեցել գարու մշակությունը: Գարին օգտագործել են ինչպես անասնակեր, այնպես էլ՝ հացաթխման համար: Գարու եւ ցորենի միախառնված ալյուրով թխված հացին Ալեքսանդրապոլի գավառի բնակիչներն անվանել են *«քարդկա»*:

Հողակլիմայական յուրաքանչյուր գոտու բնակիչ, վարատեղերի դիրքով պայմանավորված, մշակել է ուրույն ձեւով եւ տարբեր ժամկետներում: Հայաստանում ցանքի շրջանը հայտնի էր *«ցանոց»* եւ հերկիները՝ *«հերկոց»* անուններով: Հերկոցը սովորաբար ունեցել է երկու սեզոն՝ գարնան վերջերից մինչեւ ամռան կեսերն ընկած ժամանակամիջոցը եւ աշնանը: Սովորաբար հերկելն սկսում էին անձրեւից հետո: Իսկ անձրեւ չլինելու դեպքում արհեստական ոռոգում ունեցող վայրերում ըստ սովորության սկսել են ջրելուց հետո: Վար ու ցանքը կարելի էր կատարել մեկ զույգ լծկանով եւ փոքր արորով: Իսկ հերկոցը պահանջում էր գործի դնել արորի բոլոր տեսակները եւ գութանները: Հետեւապես, եթե ցանքսը կատարվում էր ընտանիքի ուժերով, ապա հերկը թելադրում էր ընկերությունների ստեղծում[12]: Աղքատիկ եկամուտների տեր գյուղացին հողը մշակում էր հին եղանակներով, գյուղական արհեստավորների ձեռքերով պատրաստած կոպիտ ու ծանր արտադրական գործիքներով: Հողը վարում էին չութով եւ արորով: Ցանքը կատարում էին ձեռքով, տափանումը՝ փայտե ցաքաններով, իսկ XXդ. սկզբին սկսեցին օգտագործել երկաթե տափաններ: Գավառի լեռնային մասերում հողերը վարել են հիմնականում արորով, իսկ գութան օգտագործել են մեծ տնտեսությունները, որոնք ունեցել են մեծ հողակտորներ: Գավառում եվրոպական տիպի երկրագործական գործիքներ գրեթե չեն օգտագործվել:

Ալեքսանդրապոլի գավառում մարտ-մայիս ամիսներին, ըստ ընդունված կարգի, գութանատերը գյուղացիներին հողը վարելու համար պայման էր առաջարկում, այսպես կոչված, մինչեւ *«թամամ հախսը» կամ «24 օրը»* գյուղացիները գութանի վարձի դիմաց երեք օր պետք է անվճար վարեին իրենց արտը, որից հետո եւս «թամամ հախսին» մասնակցողների արտերը: Քսանչորսերորդ օրը լրանալուց հետո մեկ օր էլ ուրիշ գյուղացու, որը «թամամ հախսի» մասնակից չէ, արտն են վարել: Գյուղացին դա անվանել է *«մատաղի»*: Այսինքն՝ «թամամ հախսին» մասնակցող գյուղացիները մատաղ են անում, որի մի մասը իրենք են կերել, իսկ մյուսը՝ բաժանել չքավոր գյուղացիներին: Քսանհինգերորդ օրը՝ երեկոյան, հոտաղները՝ թաշկինակները ճիպոտների ծայրին կապած, ուրախ երգելով գութանը հանձնել են տիրոջը: Գութանատերն էլ ընթրիքի է հրավիրել նրանց[13]:

Գավառում բավականին ծանր է եղել այն երկրագործ գյուղացիների վիճակը, որոնք ցանքս չեն ունեցել եւ ստիպված բատրակություն են արել: Այսպես, XIXդ. վերջին ցանք չունեցող գյուղացիների թիվը գավառում կազմել է գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվի 19,7%-ը[14], ինչը բավականին բարձր ցուցանիշ է: Աշխատանք չգտնելով՝ նրանք երկրագործական սեզոնային արտագնա աշխատանքի են մեկնել Երեւանի եւ այլ նահանգների գյուղական բնակավայրեր: Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակավայրերից 1913թ. արտագնա աշխատանքի մեկնողների թիվը 14000 էր, որոնցից 3121-ը՝ մեկնել են Երեւանի նահանգի գյուղեր, 9331-ը՝ նահանգի սահմաններից դուրս, իսկ 1548-ը՝ արտասահման[15]: Բնական աղետները նույնպես ազդել են սեզոնային արտագնա աշխատան-

---

[12] *Բդոյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 290:*

[13] *Միհիթարյանց Ա., նշվ.աշխ., էջ 297:*

[14] *Заваров С. Опыт исследования сельского хозяйства хлеборобного района Эриванской губернии и Карской области, Тифлис, 1899, стр. 264.*

[15] *Обзор Эриванской губернии за 1912, стр.14.*

քի մեկնելու վրա: Այսպես, 1905թ. Խլի-Ղարաքիլիսայի (այժմ՝ Ազատան) ցորենի արտերի կարկտահարության պատճառով հարյուրավոր երիտասարդներ ապրուստի միջոցներ ձեռք բերելու համար մեկնել են Ռուսաստանի եւ Կովկասի քաղաքներ, ինչպես եւեւ Ամերիկա[16]: Երկրագործ գյուղացիների արտագաղթը պայմանավորված էր եւեւ երաեւով, որ ազդեցիկ եւ ունեւոր գյուղացիները տարբեր միջոցների կիրառմամբ իրենց վերահսկման տակ են վերցրել բերրի հողերը. ինչը լարվածության ու բախումների պատճառ է դարձել[17]: Հողերի անարդար բաժանման պատճառով գյուղացիները, մասնավորապես միջակներն ատելություն են տածել հարուստ հողատերերի հանդեպ: Չունենալով բավական հողատարածք՝ գյուղացին տնային տնտեսության կարիքները հոգալու համար իր անչափահաս դստերը նշանել կամ *«բէշէկքեարդմի»* է արել[18]: Երկրագործների մյուս մասն էլ, հողը մշակելու միջոցներ չունենալով, վարձակալության է տվել ավելի ունեւոր գյուղացիներին այն պայմանով, որ ստացված բերքի ¼ -ը իրեն հատկացնի: Պատահել է, որ իր 5-10 օրավար հողատարածքը մի քանի տարով տալով դրացուն մշակելու, ստացված արդյունքից իրեն է վերցրել սերմացուի, դարմանի եւ ցորենի կամ գարու մի մասը, իսկ ինքը բատրակություն է արել[19]:

Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու եւ տվյալ գործն արագորեն կատարելու նպատակով բավարար աշխատուժ ու արտադրամիջոց չունենալու պատճառով հողը հերկելու, վարուցանք կատարելու, հնձելու եւ կալսելու համար հայ գյուղացիական ընտանիքներն աշխատավոր ձեռքերի եւ արտադրամիջոցների կարճատեւ կամ երկարատեւ համախմբում էին կատարում: Դրանք նախնական կոոպերացիայի մնացուկներ էին, որոնք երկար ժամանակ պահպանվել են գյուղական համայնքներում: Նախնական կոոպերացիան, որը կիրառվում էր դաշտամշակության եւ այգեգործության մեջ, հատուկ էր նաեւ տնայնագործությանը: Այսպես. բուրդ զզելը, ձավար ծեծելը, ճանապարհներ նորոգելը ու այլ աշխատանքներ կատարելը գոյություն է ունեցել մինչեւ 1930-ական թվականները[20]: Վարձու աշխատուժի պահանջարկ ունեին հացահատիկային կուլտուրաների մշակումը, այգեգործությունը, անասնապահությունը: Արեւելյան Հայաստանում, ինչքան ընդգծվում էր երկրագործության ապրանքային բնույթը, այնքան ավելանում էր բանվորական ուժի պահանջարկը: Գրեթե բոլոր գյուղերում կարելի էր տեսնել այնպիսի հարուստ տնտեսություններ, որոնք չէին կարող առկա աշխատուժով մշակել իրենց հողերը և հարկադրված են եղել պահել մշտական բատրակներ իրենց համագյուղացիներից կամ մի շարք աշխատանքներ կատարելու համար վարձելով հատուկ բանվորներ[21]: Սակայն նշենք, որ գյուղատնտեսության մեջ խոշոր կապիտալիստական տնտեսությունների թույլ զարգացման գլխավոր պատճառներից մեկը հողի բարձր կապալավարձն էր, եւ խոշոր հողատերերին ավելի ձեռնտու էր հողը վարձակալության տալ, քան սեփականություն ստեղծել: Գյուղացին, վաշխառուից 40-50 ռուբլի վարկ վերցնելով (վարկ տվողը հիմնականում ունեւոր գյուղացիներն են եղել), խոստանում է նրա համար տոկոսի դիմաց ձրի աշխատել՝ ցանել, քաղել, կալսել, ամբողջ գումարը պարտավորվում է

---

[16] Իսկիլիկյան Վ., Ազատանն եւ ազատանցիները, Գյումրի, 2007, էջ 18:

[17] Նիկողոսյան Ն., Տպավորություններ Շիրակի գյուղերից, Մուրճ, №1, Թիֆլիս, 1902, էջ 112:

[18] Նիկողոսյան Ն., նշվ. աշխ., էջ 113:

[19] Մխիթարյանց Ա., նշվ. աշխ., էջ 299:

[20] Բոյան Վ., նշվ. աշխ., էջ 304:

[21] Խաչաբեկյան Վ., Բնակչությունը եւ ինքնագործները Արեւելյան Հայաստանում (XIX դ. – XX դ. սկիզբ) Լրաբեր հասարակական գիտությունների N 3, Եր., 2008, էջ 32:

վերադարձնել բերքի ստացումից հետո՝ վճարելով 20% հավելավճար[22]: Քիչ չէր վարկառու այն գյուղացիների թիվը, որ ընկնում էին պարտքի տակ եւ դառնում անվճարունակ: Վաճառելով ունեցած խոշոր եւ մանր եղջերավոր անասունները, հողը, մինչեւ իսկ տունը՝ վճարում են իրենց պարտքը ու չունենալով ապրուստի միջոցներ՝ մեկնում էին քաղաք՝ նորից զբաղվելով գյուղատնտեսական աշխատանքով, արհեստներով կամ դառնում բանվոր: Հաճախակի երեւույթ էր գյուղացու կողմից դրացուց ալյուր կամ սերմացու պարտքով վերցնելը կալին վերադարձնելու պայմանով: Այդպիսի իրավիճակը բացասական ազդեցություն էր թողնում գավառի բուսաբուծության զարգացման վրա:

Ջավախքի, եաեւ Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիների մեջ սովորություն էր սերմացուն տանել երեցի մոտ՝ օրհնելու, որից հետո բերում խառնում էին ամբարում եղած հացահատիկին[23]: Նախքան ցանելը գյուղացին արտը բաժանում էր մարգերի: Վարում էր մինչեւ կեսօր: Բանող անասուններին հանգիստ տալով վարը շարունակվում էր երեկոյան: Վարից հետո սկսվում էր հերկը: Հերկը կատարում էին հունիս - հուլիս ամիսներին եւ պատրաստում հաջորդ տարի ցանելու համար: Մինչեւ XX դարի սկիզբն Ալեքսանդրապոլի գավառում հողատարածքների չափումը կատարվել է սոմարներով, կոտերով եւ ռուբերով: Այսպես, Ալեքսանդրապոլի գավառի Ղոլղաթ գյուղում (ներկայիս՝ Գեղանիստ) հաշվարկը կատարել են հետեւյալ կերպ. 1սոմարը =16փութ գարի, 20փութ ցորեն, իսկ 1 փութը=16կգ, 10կոտը=1 սոմարի, իսկ 4 ռուբը=1 կոտի[24]: Այսինքն՝ մեկ սոմարանոց տարածության վրա ցանվել է 16 փութ գարի եւ 20 փութ ցորեն կամ 10 կոտ հացահատիկ: Ի դեպ, Շիրակի դաշտում ամենաառատ տարում երկրագործը մեկ սոմարի ցորենից ստանում է 10-12, իսկ ոչ բերքատու տարիներին՝ 4-6 սոմարի[25]: Արժե հիշատակել, որ հացահատիկի մշակությամբ զբաղվել են ոչ միայն գյուղերում, այլեւ Ալեքսանդրապոլում: Նույնիսկ առանձին թաղամաս կար՝ *«Ռանչպարների»* կամ *«Գեղցոնց»* թաղը: Այդ եւ այլ թաղամասերի բնակիչները բացի հացահատիկից մշակել են եաեւ բանջարաբոստանային բուսատեսակներ: Ալեքսանդրապոլում մինչեւ 1875թ. գոյություն են ունեցել հողագործական համայնքներ, որոնց անվանել են *«հին դյաթներ»* եւ *«նոր դյաթներ»*[26]:

Յուղատու եւ տեխնիկական մշակվող բուսատեսակներից Ալեքսանդրապոլի գավառում աճեցրել են կտավատ, կանեփ, շաքարի ճակնդեղ, գերչակ, ատրիկ եւ սեւուկ: Կտավատի ձեթն ավելի հարգի էր, քան գերչակինը: Ալեքսանդրապոլում կտավատի մշակության տարածված լինելու մասին են վկայում նշված ժամանակահատվածում ձիթհանների առկայությունը: Կտավատի ձեթն օգտագործվել է ճաշեր, գաթա եւ բիշի պատրաստելու համար: Կանեփ քիչ են ցանել: Ձիթհանությունը զարգացած է եղել ինչպես գյուղերում, այնպես էլ Ալեքսանդրապոլում: Ձիթհանը աշխատեցրել են 4-5 մարդ: Հիմնական աշխատանքները գլխավորել է «խալֆան»: Ծառայություն մատուցողներին, որոնց թիվը 3-4 մարդ է, անվանել են *«ջոթեր»*, իսկ կտավատը բովողին եւ ծեծողին՝ *«ֆռնչի»*, ձիթհանի գումեշներ պա-

---

[22] *Նիկողոսյան Ն., նշվ.աշխ.,Մուրճ, №1, Թիֆլիս, 1902, էջ 113:*

[23] *Մալխասյան Հ., Հայ գեղջուկի ալբոմը, Ազգագրական հանդես, 1898, N 1, Թիֆլիս, 1898, էջ 360.*

[24] *Վիրաբյան Ս., Շիրակի Գեղանիստ, Եր., 2013, էջ 100:*

[25] *Մխիթարյանց Ա., նշվ.աշխ., էջ 298:*

[26] *Մեղրոսյան Կ., Արհեստավորական ավանդույթները եւ դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում,Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, հ.6,Եր.,1974,էջ183:*

հողերին՝ *«ջամուշչի»*: Չիթիաեի աշխատողներին վճարել է *«խոբատչիև»*: Պատահել է, որ նա դրամի փոխարեն վճարումը կատարել է ձեթով եւ կտավատով[27]:

Ալեքսանդրապոլի գավառում լայն տարածում է ունեցել բուսահավաքչությունը: Վաղ գարնանը՝ ձեհալից հետո, աճում էին բազմաթիվ բուսատեսակներ, որոնք օգտագործվում էին ոչ միայն որպես սենդամթերք, այլեւ դեղաբույսեր: Շիրակի դաշտում ուտելի բազմաթիվ բուսատեսակներից հավաքել են բանջարը, ավելուկը, երիժեակը, կառը, տատրակը, սինձը, սիբեխը, թթվաշը, դաղձը, եզան լեզուն եւ այլն: Բուսահավաքչությամբ հիմնականում զբաղվել են գերդաստանի հարսներն ու աղջիկները, պատանիները: Բուսահավաքչությանը շիրակցիներն անվանել են *«բանջրքաղ»*[28]: Բանջրքաղի գնալիս նրանք հետները տարել են բուսահավաքչական գործիքներ՝ *«շխպիկ»* կամ *«լեստ»*: Պատանիներն էլ իրենց սուր բահերով, որոնց անվանում էին *«բինդ»*, քաղում էին ձնծաղիկ, չիկիտամ, գրլիկ ու մատուկ, կանդառ, փշփշուկ, ջրակոտեմ, փիսկոթի, սինձ, կարմիր բանջար: Թթու դնելու համար քաղել են զոխ, ժախ, բեզա, բոճախ, օղորմակոթ եւ այլն[29]:

Բնակլիմայական առանձնահատկություններով պայմանավորված՝ Ալեքսանդրապոլի գավառում բամբակագործությունը եւ բանջարաբոստանային որոշ մշակաբույսերի տեսակների (ձմերուկ, սեխ, լոլիկ, սմբուկ եւ այլն) արտադրությունը բացակայել են: Երկրագործության այդ ճյուղերը հիմնականում զարգացել են Արարատյան դաշտի ոռոգովի հողերում:

Բանջարաբոստանային բույսեր գավառում մշակել են վաղուց: Մասնավորապես Ազատանում գյուղացիները բանջարեղեն սկսել են մշակել XIXդ. 30-ական թվականներից[30]: Կաղամբի եւ գազարի մշակությունը գավառում լայն տարածում չի ունեցել: Դրանց մշակությամբ զբաղվել են հիմնականում Ալեքսանդրապոլին հարակից գյուղերում: Աճեցրել են *«գլխանի»* կաղամբ, ավելի քիչ՝ *«շաղգամային»*, *«բրուսելի»*, *«ծաղկաբեր»* կաղամբի տեսակներ եւ *«կարմրակաղամբ»*:

Այսպիսով, XIXդ. վերջին եւ XXդ. սկզբին բուսաբուծությունն Ալեքսանդրապոլի գավառի տնտեսության առաջատար ճյուղն է համարվել: Բուսաբուծության զարգացման գլխավոր գոտին եղել է Շիրակի դաշտը: Գավառի ցածրադիր վայրերում մշակել են հացահատիկային եւ տեխնիկական մշակաբույսեր: Բնորոշ է եղել բուսաբուծության զարգացման էքստենսիվ ուղղությունը: Գյուղատնտեսության այդ ճյուղի ներդաշնակ զարգացմանը խոչընդոտել են ինչպես բնական աղետները, այնպես էլ գոյություն ունեցող պետական եւ եկեղեցական հարկերի ու տուրքերի բազմազանությունը, անարդար հողաբաժանումը, աշխատանքի ցածր արտադրողականությունը: Առաջին աշխարհամարտի նախօրեին Ալեքսանդրապոլի գավառը Երեւանի նահանգի բուսաբուծության զարգացման գլխավոր շրջաններից մեկն էր: Կապիտալիստական արտադրահարաբերությունների ներթափանցումը գավառ, երկաթուղու կառուցումը, ապրանքաշրջանառության ակտիվացումը հանգեցրին գյուղատնտեսության կառուցվածքի, արտադրության եւ բնակչության զբաղվածության քանակական ու որակական էական փոփոխությունների:

---

[27] *Մխիթարյանց Ա., նշվ.աշխ., էջ 293:*
[28] *Նույն տեղում, էջ 276:*
[29] *Նույն տեղում, էջ 278:*
[30] *Բեկիլինյան Վ., Ազատանը եւ ազատանցիները, Գյումրի, 2007, էջ 21:*

ФАКТОРЫ, ВЛИЯЮЩИЕ НА РАЗВИТИЕ РАСТЕНИЕВОДСТВА В АЛЕКСАНДРАПОЛЬСКОМ УЕЗДЕ В КОНЦЕ XIX-НАЧАЛЕ XX вв.

___ *Резюме* ___ ___ *А. Бояджян* ___

В конце XIX-начале XX вв. растениеводство в Александрапольском уезде являлось ведущей областью экономики. Зоной растениеводства являлась Ширакская равнина. В низменных частях уезда выращивали зерновые и технические культуры. Растениеводство развивалось в экстенсивном направлении. Гармоничному развитию данной отрасли сельского хозяйства препятствовали природные бедствия и катаклизмы, разнообразные государственные и церковные налоги и подати, несправедливый раздел земли, низкий уровень производительности. Проникновение капиталистических отношений и строительство железной дороги, активизация товарооборота в Александрапольском уезде привели к серьезным изменениям в строении сельского хозяйства и к изменениям количественного и качественного потенциала людей, занятых в данной отрасли. Накануне Первой мировой войны Александрапольский уезд являлся одним из главных районов развития растениеводства в Эриванской губернии.

Տեղեկություններ հեղինակի մասին
Բոյաջյան Արտաշես Գեորգի – պ.գ.թ., դոցենտ, ԳՊՄԻ աշխարհագրության ամբիոն, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, Email: a.boyajyan@mail.ru